




ՄԱՆՈՒԿՆԵՐԸ
Ս Տ Ա Լ Ի Ն Ի
Մ Ա Ս Ի Ն

ՀԱՅՊԵՏՐԱՏ

31 JAN 2018
9/1

ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ՍՏԱԼԻՆԻ ՄԱՍԻՆ

Թարգմ. Շ. ՄԱՆԳՈՅԱՆ



Z A B E S Z P U S
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱԳԱՐԱՆԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՑԵՐԵՎԱՆ 1939

1/2

Այս գրքում գետեղված պատմվածքները տպագրված են յեղել «Պրավդա», «Իզվեստիա», «Կոմսոմոլսկայա պրավդա», «Պիոներսկայա պրավդա», և «Վեչերնյայա կրասնայա գազետա» թերթերում, 1935 և 1936 թվականների ընթացքում:



О СТАЛИНЕ

Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.

11-2839497

ՄԱՍԼԱՔՑԱԹ ԿԱՆՑԳՈՎԱԾ
(Պարզեվաճարված է ԼԵՆԻՆԻ շՐՋԱՆԱԿԱՆ)

ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ՆՎԵՐՆԵՐԸ

Յեւ պիտներուէի լեւ, Ստալինաբադի շրջանի կողմը-
տեսութիւնից: Տասներկու տարեկան եւ: Յեւ լավ եւ
սովորում, բոլոր առարկաներից «գերազանց» ունեւ:

Շատ անգամ դասերից հետո յեւ կ'ընտանտեւաններին
ողնում եյի բամբակ հավաքելու:

Մենք նորմա ունեյինք, հարկաւոր եր հավաքել որական
քսան կիլոգրամ բամբակ: Սակայն այնպեւ դուրս յեկաւ,
վոր յերբ յեւ սկսեցի աշխատել, որական հավաքում եյի
համարչա հարյուր կիլոգրամ:

Ինչո՞ւ յեւ այդքան շատ բամբակ եյի հավաքում:
Շատ պարզ,—բոլորը բամբակը հավաքում եյին միայն մի
ձեռքով, իսկ յեւ՝ յերկու ձեռքով:

Աշխատանքի ժամանակ ուշադրութիւնս չեյի շեղում:
Թե աշխատում ես՝ կարգին աշխատել:

Յեւ շատ կ'ընտանտեւաններին ու կ'ընտեսուհիներին
ցույց եյի տալիս, թե ինչպեւ եւ հավաքում բամբակը, և
նրանք նույնպեւ սովորեցին: Դրանից հետո նրանք արդեն
հավաքում եյին վոչ թե քսանական կիլոգրամ, այլ շատ
ավելի:

Ինձ հրավիրում եյին հարևան կոլտնտեսությունները, վոր յես պատմեմ, թե ինչպես եմ աշխատում: Իսկ այդ ախքան պարզ բան ե—յերկու ձեռքով:

Յերբ մեզ մոտ, Տաշիկստանում ամենալավագույն կոլտնտեսականներից ու կոլտնտեսուհիներից պատվիրակություն եյին ընտրում Մոսկվա ուղարկելու համար, ինձ ևս պատվիրակ ընտրեցին:

Յեվ ահա, բոլորի հետ միասին, յես յեկա կարմիր մայրաքաղաք:

Դեկտեմբերի 4-ի որը յես յերբեք չեմ մոռանա իմ կյանքում: Այդ որը յես տեսա ընկեր Ստալինին:

Նա բարեկեց ինձ և ժպտալով հարցրեց.

— Հը, ի՞նչ կա, Մամլաքյաթ: Ինչպե՞ս ես սովորում:

Յես ասացի, վոր լավ եմ սովորում: Պատմում եմ, բայց աչքերս լա՛ցն բաց արած՝ ընկեր Ստալինին եմ նայում: Քանի՜ քանի անգամ յես տեսել եմ նրան նկարների մեջ, իսկ այսօր տեսնում եմ նրան կենդանի, իսկական:

Յես ընկեր Ստալինին մի գիրք ընծայեցի:

Այդ՝ նրա աշխատությունն եր Լենինի մասին, վոր առաջին անգամ լույս եր տեսել տաշիկերեն լեզվով:

Յես արդեն տվել եյի նրան այդ գիրքը և հանկարծ հիշեցի, վոր մոռացել եմ գրքի վրա բան գրել:

Յես ասացի.

— Հայր Ստալին, մի բոպե հետ տուր այդ գիրքը, յես մոռացել եմ վրան բան գրել:

Ընկեր Ստալինը սիրալիւր ժպտաց, ինձ տվեց գիրքը, և յես նրա վրա տաշիկերեն գրեցի.

«Հայր Ստալին, յես լավ եմ սովորում»:

Յեվ ստորագրեցի:

Այն ժամանակ Ստալինը գրկեց ինձ, համբուլեց, վերցրեց իր լուսանկարը և արագ-արագ գրեց.

«Մամլաքյաթ Նախանգովային: Լավ սովորելու և աշխատելու համար: Ի. ՍՏԱԼԻՆ»:



Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալին



Ընկեր Ստալինը և Մամլաֆյաթ Նախանգովան

Յեզ լուսանկարն ինձ մեկնեց:

Այդ լուսանկարն ամենաթանգագին, ամենաթանգարժեք նվերն է իմ կյանքում: Յեզ յես, թվում է, թե ամենալեզանիկն եմ:

Յես այդ լուսանկարը միշտ պետք է լավ պահեմ ու պահպանեմ:

Ընկեր Ստալինն ինձ ավեց նաև մի ուրիշ նվեր, — նա իմ ձեռքին վրսկե ժամացույց կապեց:

Յերբ յես գնամ տուն, Տաջիկստան, կհավաքեմ բոլոր յերեխաներին և յերկաթ-յերկաթ կպատմեմ ամեն ինչի մասին մանրամասն, թե ինչպես յես յեղա Մոսկվայում, ինչպես յես տեսա ընկեր Ստալինին և ինչպես խոսեցի նրա հետ:

Յես մինչև հիմա լավ եմ սովորել և լավ եմ աշխատել: Իսկ սրանից հետո պետք է ել ավելի լավ սովորեմ և ել ավելի լավ աշխատեմ:


1935 թ.

ԵԹԵՐԻ ԳՎԱՆՅԵԼԱԶԵ
(Պարգեւատրված է «Պատվո Նշան» շքանշանով)

ԱՅԴ ՈՐԸ ՅԵՍ ՅԵՐԲԵՔ ԶԵՄ ՄՈՌԱՆԱ

Յես պիտներուհի յեմ: Տասնհինգ տարեկան եմ: Ապրում եմ Թբիլիսիում, սովորում եմ վրացական Յ-րդ աշխատանքային դպրոցում: Բոլոր առարկաները սովորում եմ «գերազանց»-ով, և բացի դրանից, աշխատում եմ պիտներական ջուկատում՝ վորպես ողակավար:

Վորպես ուսման գերազանցիկ՝ յես ընտրվեցի մեր հանրապետության պատվիրակության կազմի մեջ՝ Մոսկվա գնալու համար: Մեր ամբողջ պատվիրակությունն ընդունվեց մեր մեծ և հարազատ Ստալինի կողմից: Յես յելույթ ունեցա: Գիտենալով, վոր ինձ լսում են Ստալինը, Մոլոտովը և կուսակցության ու կառավարության մյուս ղեկավարները, յես շատ հուզվում եյի: Յես ուզում եյի պատմել ամեն ինչ, վոչինչ չմոռանալ: Յես պատմեցի իմ դպրոցի մասին: Մեզ մոտ սովորում են շատ լեռեխաներ զանազան ազգութիւններից, և նրանք բոլորը յերջանիկ ու համերաշխ են ապրում: Իմ ընկերները խնդրել եյին ընկեր Ստալինին ասել, վոր մենք աշխատում ենք այնպես սովորել, վոր նա կարողանա ասել. — «Գերազանց է, յերեխաներ»: Ահա հենց այդ մասին ել ասացի յես իմ յելույթի ժամանակ:



Ընկերներ Ստալինը, Մալստովը և երբեք Գվանջելազեն

Յերբ յես վերջացրի, ընկեր Ստալինը մոտեցավ ինձ և սեղմեց իմ ձեռքը:

Այդ ուր յես յերբեք չեմ մոռանա: Ընդմիջումին ինձ մոտեցավ ընկեր Բերիան և ասաց, վոր ընկեր Ստալինն ինձ կանչում է իր բնակարանը:

Մենք գնացինք:

Նրա բնակարանումն էյին, բացի մեզանից, նաև ընկերներ Մոլոտովը, Վորոշիլովը, Որջոնիկիձեն, Կազանովիչը և Միկոյանը: Ընկեր Ստալինն ինձ ծանոթացրեց իր ալջկա՝ Սվետլանայի հետ: Յես ու նա շատ մտերիմ զրույց էյինք անում: Նա նույալես գերագանցիկ է:

Սվետլանան ինձ ցույց տվեց իր խաղալիքները, չինական մի հետաքրքիր, փոքրիկ շոգեքարշ, ասում եր, վոր շատ է սիրում տիկնիկ խաղալ:

Յերբ մենք բաժանվում էյինք իրարից, Սվետլանան խնդրեց ինձ, վոր յերբ Թբիլիսի հասնեմ՝ ջերմ վողջույն տանեմ իր տատիկին:

1936 թ.

ՎԱԼՅԱ ՇԵՎՉԵՆԿՈ

ՅԵՍ ԽՈՍԵԼ ԵՄ ՍՏԱԼԻՆԻ ՀԵՏ

Յես իննը տարեկան եմ: Ապրում եմ Մոսկվայում: Սովորում եմ յերկրորդ դասարանում: Յես գերագանցիկ եմ: Հայրիկս կապիտան է, ծառայում է բանակում:

Յերբ ինձ դպրոցում ասացին, թե մյուս յերեխաների հետ միասին յես ել պետք է գնամ Կրեմլ, չհավատացի: Բանից դուրս չեկավ, վոր այդ ճիշտ է:

Կրեմլի մեծ դահլիճում բացվեց Կարմիր Բանակի հրամանատարների և պետկազմի կանանց խորհրդակցությունը:

Յերբ յես դահլիճ մտա, սկզբում վոչ վորի չկարողացա լավ տեսնել: Բոլորը կանգնած էյին և ծափահարում էյին: Յես սկսեցի խոսել: Սկզբում հուզվում էյի, վախենում էյի, թե իմ ասածն արնպես չի դուրս գա, ինչպես ուզում էյի:

Հետո մենք ծաղիկներ նվիրեցինք մեր սիրելի ՍՏԱԼԻՆԻՆ: Յես վոչմի կերպ չեյի կարողանում ձեռքերս հասցնել նրան: Այն Ժամանակ ընկեր Ստալինը բարձրացրեց ինձ և դրեց սեղանի վրա: Իսկ հետո բարձրացրեց Վովա Շչեպկինին, Վովա Ոկունսկին, Նելյա Աչկասովային, Լարիսա Ուլչինսկիովային և Վերա Բասովային:

Մենք բոլորս զրկեցինք ընկեր Ստալինին և

կանգնեցինք նրա կողքին, մոտիկից սեղմվելով նրան: Դահլիճում բոլորն աղմկում էին և շատ ծափահարում էին: Իսկ մենք նայում էինք ընկեր Ստալինին: Յես առաջին անգամ էի տեսնում նրան: Նա այնքան ուրախ էր և այնքան սիրալիր:

Յես ասացի.

— Շնորհակալություն, ընկեր Ստալին, մեր ուրախ, յերջանիկ մանկություն համար:

Իսկ նա ժպտաց և պատասխանեց ինձ.

— Շնորհակալություն:

Նեկա Աչկասովան խնդրեց բարեկէ իր կողմից Սվետլանային: Իսկ ընկեր Ստալինն ասում է նրան.

— Դուք արդեն նրան ե՞ք ճանաչում:

Ընկեր Ստալինը մեզ բոլորիս ձեռքով բարեկեց: Նախագահության մեջ էին նաև ընկերներ Մուրտուլը, Վորոշիլովը և մյուս առաջնորդները:

Յերեսաները ջրապատեցին Վորոշիլովին, և յես չկարողացա տեսնել նրան: Այն ժամանակ յես ասացի.

— Մի քիչ հետ դնացեք, խնդրում եմ, թույլ տվեք, վոր տեսնեմ ընկեր Վորոշիլովին:

Նա լսեց և ծիծաղեց: Հա, յես մոռացա ասել, վոր յերեսաներն ընկեր Վորոշիլովին նվիրեցին Փյուզելյափի մի մողել:

Այդ իմ կյանքի ամենայերջանիկ օրն էր: Դպրոցում յես բոլորին կպատմեմ սիրելի Ստալինի մասին և այն բոլորի մասին, ինչ վոր տեսա Կրեմլում:

1936 թ.



Ընկերներ Ստալինը, Սրբեկովսկին և Վալա Շևչենկոն

ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ՏՎԱԾ ԾԱՂԿԵՓՈՒՆԶԸ

Յես—ԿԻՄ-ի անվան 128-րդ ջոկատի պիոներուհի յեմ։
Սովորում եմ Բաղմանյան ուսուցիչի 29-րդ դպրոցում։

Մեր ջոկատի կողմից ֆիզկուլտուրնիկների պարա-
դին մասնակցում եյի միայն յես։

Պարադի որը առավոտյան յես զարթնեցի, յերբ ժամը
5-ին պակաս եր 5 րոպե։

Յերեկոյան հայրիկիս ու մայրիկիս խնդրել եյի, վոր
զարթնեն ինձ։

Յերբ հայրիկս ժամը հինգն անց կեսին ձայն տվեց
ինձ, յես ասացի, վոր արդեն զարթնել եմ։

Վեր կացա, լվացվեցի, նախաճաշեցի և գնացի ընկերու-
հուս մոտ։ Մենք միասին ճանապարհ ընկանք դեպի դպրոց։
Դպրոցից մենք բոլորս՝ գնացինք մեր գնդի հավաքա-
կայանը։ Նախաճաշից հետո ման եյինք գալիս, յերգեր
եյինք յերգում ու պարում։

Առավոտյան ժամը իննին մոտ բաժանեցին մեզ ծաղիկ-
ներ, բերետներ, ժապավեններ՝ Բաղմանյան ուսուցիչի նշան-
ներով։ Հետո Բաղմանյան ուսուցիչի պիոներական ամբողջ գնդի
հետ մենք ճանապարհ ընկանք դեպի Ալեքսանդրյան այգին։

Այստեղ եր նշանակված պիոներական դիվիզիայի հա-
վաքման վայրը։

Մոսկվայի պիոներները դասավորվեցին ամբողջ Կար-
միր հրապարակում։

Յես պիոների և վարդերի մի մեծ փունջ եյի տանում,
վրան՝ կարմիր ժապավեն։ Պիոներներն ինձ հանձնարարել
եյին այդ փունջը հանձնել սիրելի և հարազատ Ստալինին։
Յեվ յերբ պիոներների ամբողջ դիվիզիան միաձայն,
ամբողջ հրապարակով մեկ բարձր գոչեց՝ «Վողջույն հարա-
զատ Ստալինին»—յես մոտեցա տրիբունին։ Աստիճան-
ներով վեր բարձրանալով՝ յես գնացի ուղիղ դեպի Ստալին։

Տրիբունի վրա յեղած բոլոր ընկերները հետ քաշ-
վեցին։

Փունջը տալու ժամանակ յես ասացի. «Թանգագին
Իոսիֆ Վիսսարիոնովիչին...», բայց շփոթվեցի և լացս յեկավ։

Յես շատ մոտ եյի կանգնած Իոսիֆ Վիսսարիոնովիչին
և հուզվում եյի, վոր նրա կողքին եմ գտնվում։

Ինչ-վոր մեկը հիշեցրեց ինձ, վոր հարկավոր ե հանձ-
նել ծաղկեփունջը։ Այն ժամանակ յես այդ փունջը դրի
Իոսիֆ Վիսսարիոնովիչի ձեռքը։

Նա ասաց ինձ.

—Մի փոքր հանգստացիր, իսկ հետո կպատմես, թե
ինչ են հանձնարարել քեզ պիոներները, վոր հաղորդես ինձ։

Ընկեր Ստալինից դեպի ձախ կանգնած եր ընկեր
Վորոշիլովը, իսկ դեպի աջ՝ ընկեր Կազանովիչը։ Նրանք
ասացին.

— Նայեցեք, պատվիրակ ե յեկել մեզ մոտ։

Հետո յես հանգստացա։ Իոսիֆ Վիսսարիոնովիչը հարց-
րեց.

— Այժմ կարո՞ղ ես պատմել, թե ինչ են հանձնա-
րարել քեզ պիոներները, վոր հաղորդես ինձ։

— Կարող եմ, թանգագին Իոսիֆ Վիսսարիոնովիչ,— ա-

ասացի յես:—Մոսկվա քաղաքի պիտեւորները հանձնարարել են ձեզ հանձնել այս ծաղիկեփունջը:

Նա շոյեց իմ զուլսը, համբուրեց զիմքս և ասաց.

— Այ, կեցցես:

Դրանից հետո ինձ հրավիրեցին բան ուտելու: Յես կերա մսով պատրաստված մի կարկանդակ և կեռաս: Ինձ համար թղթի մեջ կեռաս լցրին ու փաթաթեցին, վոր տանեմ: Յես նորից վերադարձա տրիբուն և կանգնեցի բարձրի մոտ: Այնտեղ կանգնած եչին ընկերներ Վորոշիլովի ու Կազանովիչը, և ինձանից դեպի հետ՝ ընկեր Ստալինը:

Նա ինձ ընծայեց մի տուփ շոկոլադի կանֆետ:

Նրանք շարունակ միմյանց հետ խոսում էին պարտի և ֆիզկուլտուրնիկների մասին:

Յերբ լելույթը վերջացավ և Կիրովյան գունդն անցավ, Իոսիֆ Վիսսարիոնովիչը հարցրեց.

— Սա ձեր գոնդն է:

— Վոչ, այ սա յե մերը,—ասացի յես, ցույց տալով պիտեւորների Բառմանյան գունդը:

— Ինչպէս է քո անունն ու ազգանունը:

Յես ասացի.

— Նինա Զգրոգովա:

— Իսկ հարիւրիդ անունն ի՞նչ է:

— Պլատոն Ալեքսեևիչ:


Դրանից հետո Իոսիֆ Վիսսարիոնովիչն ինձ Նինա Պլատոնովնա յեր ասում:

Յերբ պարտիը վերջացավ, Իոսիֆ Վիսսարիոնովիչն ինձ ասաց.


-- Յտեսություն: Տես, չմոռանաս մեզ:

Յես պիտեւորական վողջույն տվեցի նրան, հրաժեշտ տվեցի, և Ստալինի, Վորոշիլովի ու Կազանովիչի հետ միասին աստիճաններով իջա ցած, դամբարանի հրապարակը: Այստեղ ինձ անմիջապէս շրջապատեցին:

Հուսանկարիչներն սկսեցին նկարել, իսկ ինչ-վոր մեկը



Ընկերներ Ստալինը և Խրուշչևը յերեսաների մեջ՝ Շչեկովոյի ողանավակայանում



հարցնում եր, թե ինչի՞ մասին եր խոսում ինձ հետ ընկեր Ստալինը:

Այժմ յես ուզում ես ասել դարձյալ ահա թե ինչ:

Սկզբում յես հուզվում եյի, իսկ հետո, չերբ կանգնեցի ընկեր Ստալինի կողքին, տեսա, թե ինչքան պարզ ու սիրալիր եր նա, այն ժամանակ յես լիովին հանգստացա և սկսեցի խոսել:

Յես պետք է պատմեմ իմ բոլոր ընկերներին, թե վորքան սիրալիր ու լավն է ընկեր Ստալինը: Յես նրան շատ եմ սիրում նրա համար, վոր նա շատ է հոգում մեզ՝ չեքեխաներիս համար:

1935 թ.

ԼԵՆԻՆԱ ՎԱՐՇԱՎՍԿԱՅԵ

ԻՆՉՊԵՍ ԾԱՆՈԹԱՑԱ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ՀԵՏ

Յերբ ցույցը վերջացավ, յես և ուրիշ մի քանի յերեխաներ մոտեցանք դամբարանին և սկսեցինք ձեռքներս թափահարել, առաջնորդներին վողջունել:

Հանկարծ յես ասնում եմ՝ Ստալինը թափահարում է ձեռքը, ինձ հրավիրում է իր մոտ: Յես մի փոքր շուռ-յեկա և մատս դրեցի կրծքիս:

«Յե՛ս», Ստալինը ժպտաց և գլիով նշան արեց: Յես ասնդուխքով վեր վազեցի, բարձրացա տրիբունի վրա և մոտեցա Ստալինին: Նա հարցրեց ինձ.

— Ի՞նչ է քո անունը:

— Լենինա:

— Կեցցե՛ս: Լավ անուն է:

Հետո Ստալինը հարցրեց, թե ի՞նչ են իմ մայրիկի ու հայրիկի անունները: Այդ ժամանակ հրապարակով անցնում եր նվազախումբը: Վորոշիլովն ասաց.

— Նրանք լավ են նվագում, հարկավոր է ծափահարել:

Յես կանգնած եյի Ստալինի և Վորոշիլովի միջև և նրանց հետ միասին ծափ եյի տալիս:

Յերբ նվազախումբն անցավ, Ստալինը հարցրեց ինձ.

— Իսկ ինչպէս պետք է հիմա տուն գնաս դու:
Յես պատասխանեցի, վոր կգնամ մորաքրոջս մօտ և
դրամ կվերցնեմ նրանից ճանապարհի համար:

— Իսկ ինչքան դրամ է հարկավոր քեզ,—հարցրեց
Ստալինը:

— Տաս կոպեկ,—պատասխանեցի յես:

Ստալինը վորոնեց իր գրպաններում, բայց վոչինչ չգը-
տավ և ժպտալով հարցրեց.

— Քեզ մօտ կա, ընկեր Վորոշիլով:

Վորոշիլովը գրպանից մի թուղթ հանեց և ինձ մեկնեց:
Հետո մենք միասին սկսեցինք իջնել դամբարանի
սանդուխքներից: Ճանապարհին Ստալինը հարցրեց ինձ,
ցույց տալով Բուդյոննուն.

— Ո՞վ է նա:

Յես պատասխանեցի՝ վոր նա ընկեր Բուդյոննին է:
Ապա նա սկսեց հերթով ցույց տալ ընկերներ Վորոշիլովին,
Մոլոտովին, Կալինինին, հարցնելով ինձ, «Ո՞վ է նա»:
Յես բոլորին ճանաչեցի:

Հետո ինձ տարան տուն՝ Կունցեփո:

Այդ հանդիպումը յես յերբեք չեմ մոռանա:

1936 թ.

ԲՈՐՅԱ ԲՐԵՆՆԵՐ

ԱՄԲՈՂԶ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ԾԱՓ ԵՅԻՆՔ ՏԱԼԻՍ

Յես և իմ յեղբայր Նաումը գնացինք մայրիկի մօտ՝
Կուլտուրայի և Հանգստի պարկը: Տեսնում ենք՝ մեր դիմա-
ցից մարդիկ են գալիս: Յես իսկույն ճանաչեցի, վոր այդ
Ստալինն է՝ սպիտակ հագուստով ու սև, յերկարավիզ կոշիկ-
ներով, իսկ նրա հետ Կազանովիչն է, վոր հագնված է
յերկաթուղայինի պես, և Մոլոտովը, նույնպես սպիտակ հա-
գուստով: Յեվ հետո ելի ընկերներ Որշոնիկիձեն ու Անդրեկը:
Յես առաջինը ճանաչեցի բոլորին ու գոչեցի՝ յերեխաներին.
«Ստալինն է, Ստալինը», առաջինը վազեցի Ստալինի մօտ, և
նա գրկեց ինձ: Այն ժամանակ մօտեցավ Կազանովիչը և նույն-
պես գրկեց ինձ: Յեվ այդպես մենք գնում ելինք, և նրանք
խոսում էին ինձ հետ: Հավաքվեց հարյուր յերեխա, իսկ հետո
նույնիսկ ավելի շատ — յերեք հարյուր, և բոլորը «ուռա» էին.
կանչում ու առաջ վազում: Իսկ յես հարցրի ընկեր Ստալինին.

— Դուք ելի մի անգամ ել կրգա՞ք մեզ մօտ, պարկը:
Իսկ նա ասում է.

— Անպայման կգամ:

Այն ժամանակ յես ասացի.

— Ավելի լավ է՝ հանգստի ուրը գաք, այստեղ շատ
ուրախ ե լինում:

Ինչ-վոր մեկը բարձր ձայնով կանչեց.

— Կեցցե՛ ընկեր Ստալինը:

Յեվ բոլոր յերեխաներն այնպես բարձրաձայն «ուռա»
եյին կանչում, վոր յես նույնիսկ չեյի լսում իմ ձայնը,
թեև բոլորից բարձր եյի գոչում:

Բոլորն այնպես եյին շրջապատել Ստալինին, Որջոնի-
կիձեյին, Մոլոտովին, Կազանովիչին ու Անդրեևին, վոր
նրանք չեյին կարողանում առաջ շարժվել, և Ստալին քե-
ռին իմ յեղբայր Նաումկային և ելի ուրիշ՝ ավելի մեծ հա-
սակ ունեցող յերեխաներին ասաց.

— Հապա, յերեխաներ, կարգ մտցրեք այստեղ:

Բայց յերեխաները չեյին լսում և ամբողջ ճանապարհին
«ուռա» եյին կանչում ու ծափ տալիս, և յես նույնպես
«ուռա» եյի կանչում:

Հետո նրանք բոլորը խոսում եյին մոտոռային նավակ-
ների և Մոսկվա գետի նոր գետափի մասին, իսկ ընկեր
Որջոնիկիձեն առաջ տարավ մի աղջկա և ասաց.


— Ահա սա կարգ կմտցնի, սա «գերազանց» ե սովո-
րում և նույնիսկ պարգևատրված ե:

Այդ նա յեր իր մասին պատմել նրան ճանապարհին:

Իսկ յերը նրանք ավտոմոբիլ նստեցին ու գնացին,
յես ինչքան վոտքերիս մեջ ուժ ունեյի՝ տուն վազեցի,
թեև յերբեք մենակ չեյի գնացել այդքան հեռու: Յես
ուզում եյի ամեն ինչ պատմել հայրիկիս ու բոլորին: Յես
նույնիսկ ուզում եյի տրամվայի մեջ պատմել, բայց արդեն
շատ եյի ուզում շուտով տուն հասնել:

Ինձ առաջինը հանդիպեց Վանյա Կոչետկովը: Նա
չհավատաց:

— Շատ հարկավոր ես,—ասում ե,—դու նրան: Իսկ
յես ասում եմ.



Երեխաները Ստալինը և Կազանովիչը մեջ, Գորկու անկյունի տարածքի
յուրկան փոստից

— Բայց արի տես, վոր հարկավոր եմ:

Մեր բակի քեռի Վասյան նուխպես չհավատաց, բայց հետո սկսեց հավատալ, չէրբ Վանյա Կոչետկովի հարեանուհին նրան պատմեց նույն բանը, վորովհետև մեզ հետ միասին նա լել պարկուճն եր յեղել: Հայրիկս անիջապես հավատաց: Յես հիմա բոլորին կպատմեմ այդ մասին:

1935 թ.

ԲՈՒՍՅԱ ԳՈԼԴՇՏԵՆ

(Պարզեկատրված է «Պատվո Նշան» ցեանունով)

ՅԵՐԿՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Յես յերազում անգամ չեյի կարող տեսնել, վոր այդքան մոտիկից պետք է տեսնեմ ընկեր Ստալինին, վոր նա պետք է խոսի ինձ հետ:

Ահա թե ինչպես պատահեց այդ:

Կոնսերվատորիայի Մեծ դահլիճում յերիտասարդ շնորհալի ուժերի առաջին Համամիութենական կոնկուրսի մասնակիցների համերգն եր: Իմ յելույթի ժամանակ յես բեմից տեսա, վոր ոթյակում նստած է ընկեր Ստալինը: Նա ուղարկությամբ լսում եր իմ նվագը:

Յելույթս վերջացնելուց հետո յես ուզեցի լսել, թե ինչպես են նվագում իմ ընկերները, և կամացուկ բարձրացա վերնասրահ:

Հափշտակված լսելու ժամանակ յես չնկատեցի, թե ինչպես են ինձ մոտեցել մարդիկ և կանչում են, վոր գնամ իրենց հետ: Միքանի ըուպեյից հետո յես արդեն գտնվում եյի այն ոթյակում, վորտեղ ընկեր Ստալինն եր նստած:

Ինձ ծանոթացրին ընկեր Ստալինի հետ: Նա ինձ դիմավորեց սիրալիր ժպիտով, ձեռքը մեկնեց, բարևեց, առաջարկեց նստել: Համերգն իր կարգով շարունակվում եր, բայց յես

այլևս չեյի կարող լսել: Յես անթարթ նայում էյի ընկեր Ստալինին, վորն այնքան մոտիկ եր նստած ինձ:

Նկատելով իմ համառ հայացքը, ընկեր Ստալինը ժլպտալով ասաց շրջապատողներին.

— Այս ինչո՞ւ Բուսյան ախպես լարված ուշադրությամբ ե նայում ինձ:

Յե՛վ այս ասելուց հետո՝ ընկեր Ստալինը գովեց իմ նվազը ջութակի վրա: Նա ասաց, վոր յես ավելի լավ եմ նվագել, քան ինձանից առաջ յելուլթ ունեցած ջութակահարը:

— Այդ չի կարող պատահել, ընկեր Ստալին, — ասացի յես: Այն ջութակահարն ավելի մեծ փորձ և հմուտ թյուրն ունի: Բացի դրանից, նա ինձանից մեծ ե:

Ընկեր Ստալինը մի անգամ ել կրկնեց, վոր իմ նվազը զգալի չափով ավելի լավ եր, և բացատրեց թե ինչու:

Յես միտքս չպահեցի այն ամենը, ինչ վորնա ասաց, վորովհետև հուզված էյի:

Կարճո՞ղ էյի արդյոք յես մտածել, վոր մյուս ուրը նորից պետք ե տեսնելի Իոսիֆ Վխատարիճովիչին:

Համերգի մասնակիցներին հրավիրեցին Կրեմլ: Այնտեղ հասնելով մենք տեսանք, վոր ընկերներ Ստալինն ու Կազանովիչը զբոսնում են:

Նրանք մոտեցան մեքենային, բարևեցին մեզ:

Մեզ տարան ընկեր Մոլոտովի առանձնասենյակը: Շուտով այնտեղ յեկավ նաև ընկեր Ստալինը: Մեզ հետ միասին նա լսեց ընկեր Մոլոտովի կարդացած վորոշումը՝ կոնկուրսի մասնակիցներին պարգևատրելու մասին:

Շուտով մեզ փոքրիկ ծրարներ բաժանեցին, վորոնց մեջ դրամ ստանալու անդորրագրեր կային: Ընկեր Ստալինն ասաց.

— Հապա ստուգիր, Բուսյա, տես, թե արդյոք քո ծրարի մեջ անդորրագիր կա:

Յես մեքենայաբար լույսին բռնեցի ու ասացի.

— Կա, ընկեր Ստալին:


Նա ծիծաղեց և ասաց.

— Դու հիմա կապիտալիստ ես: Յեթե յես քեզ մոտ հյուր գամ, դու գուցե և չճանաչես ինձ:

Յես ընկեր Ստալինին պատասխանեցի, թե այդպիսի բան ինձ հետ չի կարող պատահել, իսկ ինքս ինձ այդ ժամանակ ասում էյի. բա ինչպե՞ս ընդունեմ այդպիսի թանկագին հյուրին մեր փոքրիկ սենյակում, վորտեղ ապրում էյինք մենք այն ժամանակ:

Հետագայում, ընկեր Ստալինի շնորհիվ, մենք ստացանք մի ընդարձակ բնակարան, վորտեղ ապրում ենք այժմ: Հիմա յես ունեմ իմ առանձին սենյակը, և ինձ վոչ վոք չի խանգարում զբաղվելու յերաժշտությամբ և իմ կըրթությամբ:

1936 թ.



ՄԻՇԱ ԿՈՒԼԵՇՈՎ
(Պարզեվասրված է «Պասվո՛ Նեան» շխմշանով)

ԻՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ՀԵՏ

Նստել ելի յես առաջին կարգում, լսում եյի, թե ինչ են ասում անասնապահ-կոլտնտեսականները, իսկ ինքս աչքս չեյի հեռացնում ընկեր Ստալինից: Իմ կողքին նստել եր պիոներ Վանյա Չուլիովն «Անաստված» կոլտնտեսությունից: Վերջին նիստն եր: Ուզում եյի ամբողջ կյանքումս հիշել Ստալինին, նկատել նրա ամեն մի շարժումը, ամեն մի ժպիտը: Չէ՞ վոր յերբ գյուղ վերադառնամ, առաջին բանը, վոր պետք է հարցնեն ինձ, հետեվլալն է.

— Իսկ ընկեր Ստալինին տեսնել ես:

Հանկարծ տեսնում եմ՝ Իոսիֆ Վիսսարիոնովիչը ժրպտում է և ձեռքով կանչում է մեզ իր մոտ՝ նախադահլթյան մոտ: Մենք վեր թռանք տեղներիցս և սլացանք դեպի ընկեր Ստալինը:

— Ինչպե՞ս է ձեր անուն-ազգանունը:


Նա ինձ «դուք» ասաց.

Յես պատասխանեցի.

— Միշա Կուլեշով:

— Սովորո՞ւմ եք դպրոցում.

— Այո, հինգերորդ դասարանում եմ:



Գրվել է Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինի կողմից

— Կեցցես, — ասաց Իոսիֆ Վիսսարիոնովիչը և ամուլ գրկեց ինձ:

Յես ուրախ թուռնից չգիտեյի, թե ինչ անեմ:

— Դեհ, պատրաստվիր, յեղույթ ես ունենալու, — ասաց ինձ ընկեր Ստալինը:

Լսում եմ՝ ծափահարում են: Յերբ կոլտնտեսականի յեղույթը վերջացավ, հայտարարեցին.

— Իսկ այժմ խոսք ունի պիոներ Աիշա Կուլեշովը, Մոսկվայի մարզի Բելոսկու շրջանի «Կրասնի Լուչ» կոլտնտեսություն հորթերի շեֆը:

Իմ վոտքերի տակ աթոռ դրեցին, և յես սկսեցի պատմել, թե ինչպես ենք մենք սկսել շեֆությունն անել և ինչքան հորթեր ենք աճեցրել:

Յերբ յես ասացի, թե աճեցրել ենք տասնութ հորթ, տաս քուռակ և մի զույգ ձի՝ Կարմիր Բանակի համար, բոլորը սկսեցին ծափահարել: Յես պատմեցի նաև այն մասին, թե ինչպես եմ սովորում, քանի հատ գերազանց գնահատական ունեմ, և այն մասին, թե ինչ ենք անում մենք պիոներական ջոկատում: Հետո դարձա դեպի նախագահություն և ասացի.

— Յես մի բան պիտի խնդրեմ ընկեր Ստալինից: Մեր կոլտնտեսության մեջ պիոներների տուն չկա: Յես խնդրում եմ, վոր ընկեր Ստալինն ոգնի մեզ այդ գործում:

Յերբ յես վերջացրի, նորից գնացի նախագահություն մոտ: Ընկեր Վորոշիլովին իմ ձեռքը սեղմեց և ժպտալով ասաց.

— Կեցցես: Քո ձիերը կվերցնենք:

Իսկ ընկեր Ստալինը գրկեց ինձ, վերցրեց ձեռքերի վրա և դրեց աթոռին:

Նա պինդ սեղմեց իմ ձեռքը և ասաց.

— Կոզնենք, կոզնենք:

Դեռևս յերբեք յես աֆաֆան յերջանիկ չեմ յեղել, վորքան այդ յերեկո:

1936 թ.

ԲԱՐՍԶԳԻ ԽԱՄԳԱԿՈՎ

(Պարգևատրված է «Պաբլո Նեան» շքանշանով)

ԻՄ ԱՄԵՆԱՅԵՐՉԱՆԻԿ ՈՐԸ

Մի անգամ պատահմամբ յես մտա մեր կոլտնտեսություն հայտարար: Այնտեղ կար ութ քուռակ: Քուռակները լավ տեսք չուներին, և յես խղճացի նրանց: Այն ժամանակ յես ասացի ձիապան Պատու Տաուֆին.

— Յես պիոներ եմ և պետք է խնամեմ այս քուռակին, — և ցույց տվեցի ամենից նիհարին:

Յես կուշտ կերակրում եյի նրան, փոխում եյի ցամաքը, մաքրում և լվանում եյի նրան սապոնով, ինչպես վոր հարկավոր է: Նրա անունը յես Կոստիկ դրի: Կոստիկին յես աճեցրի, և նա լավ նժույգ դարձավ: Իմ Կոստիկին նույնիսկ ինքը՝ Բուդյոննին գիտե:

Յերբ Կաբարդինո — Բալկարիան տոնում եր իր տասընհինգամյակը, յես համաժողովրդական ձիարշափների ժամանակ սլանում եյի Նալչիկում իմ սիրելի ձիու վրա: Տրեքունից ինձ եր նայում ընկեր Բուդյոննին: Յես բոլորից առաջ անցա և հաղթող դուրս յեկա ձիարշավից:

Մեզ մոտ, Կենտե աուլում շատ կան պատանի ջիգիթներ: Յես տասնհինգ պիոներների սովորեցրի, թե ինչպես պետք է լավ ձի նստել ու քշել: Գարնանը մենք մի շամակ գրեցինք մարշալ Վորոշիլովին:

«Մենք բոլորս ուզում ենք դառնալ ջիզիթներ՝ Կարմիր Բանակի լավ մարտիկներ: Մենք շատ ենք սիրում Սորհրդային Միության մարշալներին—ընկեր Վորոշիլովին և ընկեր Բուդյոննուն: Մենք ուզում ենք, վոր Հյուսիսային Կովկասի պիոներները մի նվեր տան Վորոշիլովին—աճեցնեն մի սքանչելի, մարտական ձի: Մենք կաշխատենք, վոր մեր ջոկատն աճեցնի ամենալավ ձին»:

Յերբ ինձ հարց են տալիս՝

— Բարագրբի, վոնն ե քո ամենայերջանիկ որը,—յես ասում եմ.

— Յերջանիկ որեր յես շատ ունեմ: Յեվ դեռ ել ավելի շատ կունենամ: Բայց իմ ամենալավ որը այն որն եր, յերբ յես խոսում եյի ընկեր Ստալինի հետ:

Այդ տեղի ունեցավ Կրեմլի պալատում: Ստախանովական անասնապահների Համամիութենական խորհրդակցութունն եր: Յես նստած եյի դահլիճում, Հոսսիսային Կովկասի պատվիրակության հետ, ինչպես միշտ՝ չերքեղկայով ու դաշույնով: Հետո ինձ խոսք տվին: Տրիբունը շատ բարձր եր, յես կանգնեցի աթոռի վրա և բոլորին պատմեցի, թե ինչպես են պիոներները մեզ մոտ աճեցնում ձիերին:

— Իսկ քանի՞ տարեկան եք դուք,—հարցրեց ինձ ընկեր Ստալինը:

— Յես տասներեք տարեկան եմ:

— Այ, կեցցես,—ասաց ընկեր Ստալինը, և բոլորը ծափ տվին ինձ:

Յերբ յես իմ խոսքը վերջացրի, սեղմեցի ընկեր Ստալինի և բոլոր առաջնորդների ձեռքերը:

Այդ իմ ամենալավ որն եր: Ընկեր Ստալինը ժպտում եր ինձ: Իսկ յերբ ընկեր Ստալինը ժպտում ե, այն ժամանակ բոլորն ուրախանում են:

1936 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընկեր Ստալինի նվերները.—Մամլաֆյաք Նախագուլա	3
Այդ որը յես յերբեք չեմ մոռանա.—Եթերի Գվանցիլածե	8
Յես խոսել եմ Ստալինի հետ.—Վալյա Շեվչենկո	11
Պիոներների տված ծաղկեփուռը.—Նինա Զորոգովա	14
Ինչպես ծանոթացա ընկեր Ստալինի հետ.—Լեոնիդ Վարշավսկայա	19
Ամբողջ ճանապարհին ծափ եյինք տալիս.—Բորյա Բրեններ	21
Յերկու հանդիպում.—Բուսյա Գոլշտեյն	25
Իմ հանդիպումն ընկեր Ստալինի հետ.—Միշա Կուլեշով	28
Իմ ամենայերջանիկ որը.—Բարագրբի Խալգակով	31

Պատ. խմբագիր՝ Ա. Մալխասյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբազրիչներ՝ Ա. Արզաքանյան, Բ. Ղուկասյան
Կոնտրոլ սրբագրելի՝ Շ. Գաբազադ

Գլավխիտի լիազոր՝ Խ—1198. Հրատ. № 5049.

Պատվեր 799. Տիրաժ 4000.

Թուղթ 62×94. Տպագր. 2 մամ.

Մեկ մամ. 24180 նշան.

Հանձնված է արտադրության 21 հոկտեմբերի 1939 թ.

Ստորագրված է տպագրության համար 25 նոյեմբերի 1939 թ.

Պետհրատի 1 տպարան Յերևան, Լենինի, 65.

ՀՀ Ազգային գրադարան



NL0937806

ԳԻՆԸ 1 Դ.

640

11

28394

Д Е Т И
О С Т А Л И Н Е
Гиз. Арм. ССР, Ереван, 1939